ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ ----------

«01» ----09----2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Երևանի Հովհաննես Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

_____VI^ա_____դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

_____Հարությունյան Նաիրա Ռոստնանի_____

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2023- 2024 » ուսումնական տարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանը բաղկացած է 35 աշակերտից՝ 18 տղա և 17 աղջիկ, ունենք 2 նոր աշակերտ:Դասարանում սովորում են տարբեր ունակություններով,նախասիրություններով աշակերտներ,ստեղծված է բավականին համերաշխ կոլեկտիվ,բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ:Դասարանում ունենք ԿԱՊԿՈՒ 2 աշակերտ՝Ծատուրյան Վահեն և Վարդանով Հայկը,որոնք շրջապատված են դասընկերների սիրով ու ջերմությամբ:

Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

Հայեցի դաստիարակություն

Հոգևոր դաստիարակություն Խնդիրները՝

Աշակերտների մեջ սերմանել հարգանք քրիստոնեական արժեքների նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

Կարևորելով եկեղեցու դերն ու նշանակությունը ազգապահպանության,ազգային ավանդույթների պահպանման և սերունդների հայեցի դաստիարակության հարցում՝ նախատեսվում է անցկացնել աստվածաշնչյան ընթերցումներ, զրույցներ և քննարկումներ՝ համագործակցելով հայոց եկեղեցու պատմության ուսուցչի հետ:

_____

_____

_____

Գեղագիտական դաստիարակություն- *Խնդիրները՝*

Մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում:

Ուցկացնել զրական ընթերցումներ, քննարկումներ, մրցույթներ, այցելություններ մշակութային տարբեր օջախներ՝ համերգարան, թարոն, կինոթարոն, թանգարան և այլն:----------
---

Ռազմահայրենասիրական դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշակերտների մեջ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ հայ ազատամարտիկների նկատմամբ: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և սեր՝ռազմարվեստի նկատմամբ:

Ուցկացնել զրույցներ և քննարկումներ տարբեր ժամանակների, ինչպես նաև մերօրյա հերոսների մասին, համդիպումներ անմահացած հերոսների հարազատների հետՀայրենասիրական թեմաներով միջոցառումների կազմակերպում,պատտոների պարատում, ֆիլմերի դիտում, քննարկում,այցելություն Եռաբլուր:----------
---

Ֆիզիկական դաստիարակություն *Խնդիրները՝*

Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում:

Կազմակերպել սովորողների ֆիզիկական զարգացմանն ո առողջության պահպանմանն ուղղված ակտիվ միջոցառումներ՝ մրցույթներ, էքսկուրսիաներ, արշավներ:Անցկացնել զրույցներ անձնական և հասարակական հիգիենայի կանոնների պահպանման անհրաժեշտության վերաբերյալ:

Աշխատանքային դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում:

Անցկացնել զրույցներ ,քննարկումներ արհեստների, տարբեր մասնագիտությունների վերաբերյալ: Կազմակերպել հանդիպումներ,զրույցներ տարբեր մասնագիտություններ ունեցող ծնողների հետ: Մասնակցություն շաբաթօրյակներին,ծառատունկներին,գրադարանի գրքերի վերանորոգման աշխատանքներին:

Բնապահպանական դաստիարակություն *Խնդիրները՝*

Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում

Զրույցներ բնապահպանական թեմաներով,այցելություն զբոսայգի՝ տարածքը էկոլոգիական աղբից մաքրելու նպատակով:

Տեղեկատվություն բնական աղետների և դրանց ժամանակ մարդկանց գործունեության, վարքագծի մասին:

Դպրոց-ընտանիք կապը *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը, որպեսզի ավելի լավ սովորեն:*

Ծնողական խորհրդի ստեղծում և ծնողական համայնքի հետ համագործակցություն, ծնողական ժողովների

կանոնավոր անցկացում, երեխաների կենսակերպի, նրանց ընտանիքների սոցիալական պայմանների

ուսումնասիրում, դասարանի աշխատանքներում ծնողների ներգրավում: Սերտ համագործակցություն ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների հետ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ	
Շաբաթվա օրը	դասաժամը	Շաբաթվա օրը	դասաժամը
հինգշաբթի	7-րդ		

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ	Կատարվել է
I	Գիտելիքի և դպրության տոն	01.09.23	
II	Զրույց աշակերտների իրավունքների և պարտականությունների մասին	07.09.23	
III	Հաղորդակցման ժամ՝ «Հանդուրժողականության անհրաժեշտությունը» թեմայով	14.09.23	
IV	Տեղեկատվական զրույց՝ նվիրված ՀՀ Անկախության տոնին	20.09.23	
V	Հաղորդակցման ժամ՝ «Իմ ընտանիքը» թեմայով	28.09.23	
VI	Զրույց՝ «Հրաշալի է, եթե իմ ուսուցիչը…»	05.10.23	
VII	Զրույց՝ «Առողջ ապրելակերպի սկզբունքները»	12.10.23	
VIII	Զրույց՝ «Բոլորս հավասար ենք» թեմայով	19.10.23	
IX	Հաղորդակցման ժամ՝ «Հարգի՛ր ինքդ քեզ » թեմայով	02.11.23	
X	Տեղեկատվական զրույց՝ «Էկոլոգիական խնդիրներ » թեմայով	09.11.23	
XI	Զրույց՝ «Ես-ի ու մենք-ի մասին »	16.11.23	

XII	Տեղեկատվական զրույց՝ «Բնական պաշարներ » թեմայով	23.11.23	
XIII	Զրույց՝ «Ի՞նչ եմ երազում » թեմայով	30.11.23	
XIV	Տեղեկատվական զրույց՝ «Բնական աղետներ» թեմայով	07.12.23	
XV	Հաղորդակցման ժամ՝ «Ես ուզում եմ և կարող եմ… » թեմայով	14.12.23	
XVI	Հաղորդակցման ժամ՝ «Ամփոփելով տարին… »	21.12.23	
XVII	Քննարկում՝ «Եթե ամենակարող լինեի » թեմայով		
XVIII	Հաղորդակցման ժամ՝ «Ժպիտը մարդուկյանքում » թեմայով		
XIX	Տեղեկատվական զրույց՝ նվիրված Հայոց բանակի տոնին թեմայով		
XX	Քննարկում՝ «Եկեղեցին և ազգը » թեմայով		
XXI	Տեղեկատվական զրույց՝ «Լրատվամիջոցներ և սոցցանցային խաբկանքներ » թեմայով		
XXII	Տեղեկատվական զրույց՝ «Պետական և եկեղեցական տոներ » թեմայով		
XXIII	Հաղորդակցման ժամ՝ «Լեզուն ազգի հոգին է » թեմայով		
XXIV	Տեղեկատվական զրույց՝ «Բարեկամներ և թշնամիներ » թեմայով		
XXV	Ստեղծագործական մրցույթ՝«Մայրս պատկերն է մայր հայրենիքիս » թեմայով		
XXVI	Տեղեկատվական զրույց՝ «Բնական աղետներ» թեմայով		
XXVII	Հաղորդակցման ժամ՝ «Այստեղ ես տանն եմ » թեմայով		
XXVIII	Հաղորդակցման ժամ՝ «Ասացվածքի ամբիոն »		
XXIX	Տեղեկատվական զրույց՝ «Սպառողների իրավունքները » թեմայով		
XXX	Քննարկում՝ «Ի՞նչը խնայել և ինչո՞ւ » թեմայով		
XXXI	Գրական ընթերցման ժամ՝ «Հայը ապրել է,ապրում է, կապրի » խորագրով		
XXXII	Հաղորդակցման ժամ՝ «Իր գործի վարպետը » թեմայով		
XXXIII	Զրույց՝ «Ինչո՞վ եմ ես հպարտանում»		
XXXIV			
	Ամփոփիչ զրույց՝ « Իմ ձեռքբերումներն ու բացթողումները »		